**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 05.10.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/7 պայմանագրում 2021 թվականի փետրվարի 9-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Նորոշում: |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/7 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր: |

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**05.10.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/7 պետական գնման պայմանագրի**

ք. Երևան «09» «մարտի» 2021թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Փըրֆեքթ Աուդիտ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն Ա. Բաբայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշումը և Կողմերի միջև ներքին աուդիտի ծառայությունների մատուցման համար 05.10.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/7 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագիրը լրացնել հավելված N 2-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Փըրֆեքթ Աուդիտ>> ՍՊԸ
ք. Երևան, Մաշտոցի 7
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1930046450680100
ՀՎՀՀ 02591995
Տնօրեն

______________ Ա. Բաբայան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
05.10.2020թ. կնքված ծառայությունների մատուցման
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/7 գնման պայմանագրի
09.02.2021թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N 2
05.10.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/7 գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79211180/501 | Ներքին աուդիտի ծառայություն | - | - | - | 1 737 500 | 1 737 500 | 1 737 500 | 3 475 000 | 3 475 000 | 3 475 000 | 6 950 000 | 6 950 000 | 6 950 000 | 6 950 000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով>>:

### Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____________ Վ. Անդրեասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Փըրֆեքթ Աուդիտ>> ՍՊԸ
ք. Երևան, Մաշտոցի 7
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1930046450680100
ՀՎՀՀ 02591995

Տնօրեն

_____________ Ա. Բաբայան
(ստորագրություն)
Կ.Տ.